ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ
ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 40-ԱՄՅԱԿԸ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱԲԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

Պատմական իրադարձությունները, ինչպես և դեմքերը, ըստ կատարած դերի և կարևորության իրենց ուրույն տեղն ունեն մարդկային ցեղի հիշողության, ավելի ստույգ՝ տարեգրության ծալքերում։ Այդ իրադարձությունների մի մասը ժամանակի հետ փոշիանում է, կորչում անցյալի մշուշում, մոռացության մատնվում և, սովորաբար, Պոմպեյի փլատակների նման, նորից լույս աշխարհ կարող է գալ միայն ու միայն մի ինչ որ անսպասելի, աննախադեպ առիթով։ Բայց կան իրադարձություններ, որոնք այս կամ այն ժողովրդի անցյալ կյանքի, փորձի ու մաքառումների կենդանի մարմնացումը լինելով՝ ուղեկցում են տվյալ ժողովրդի աշխարհ եկող նորանոր սերունդներին, դառնում նրանց համար անփոխարինելի «հոգևոր սնունդ», մղումների, մնայուն գործերի անհատնում աղբյուր։ Սակայն կան եզակի իրադարձություններ էլ, որոնք միշտ համայն մարդկության հետ են, նրա աչքերի առաջ, նրա կողքին, և ինչքան ավելի է առաջ ընթանում ժամանակը, այնքան ավելի են գնահատվում դրանց դասերը, այնքան ավելի լրիվ, հստակորեն է բացահայտվում դրանց վճռական բեկումնային դերը մեր մոլորակի վրա բնակվող բոլոր մարդկանց համար։ Որպես կանոն, այդ իրադարձությունները մարդկությանը փրկում են վերահաս աղետներից, դեն նետում նրա առաջընթացն արգելակող վտանգը, բացում նոր հորիզոններ, սկզբնավորում նոր փուլ նրա վերելքի ճանապարհին, էական, հաճախ նույնիսկ վճռական ազդեցություն գործում մարդկային քաղաքակրթության զարգացման ընթացքի վրա։ Այս առումով բացառիկ է գերմանական ֆաշիզմի և ճապոնական միլիտարիզմի դեմ սովետական ժողովրդի և նրա զինված ուժերի տարած հաղթանակի նշանակությունը մարդկության ճակատագրում, հաղթանակ, որի 40-ամյակը այս տարի մեծ ոգևորությամբ և հանդիսավորությամբ տոնում է առաջադեմ ամբողջ մարդկությունը։

ՍՍՀՄ-ի հաղթանակը մարդկային քաղաքակրթության առաջատար ուժերի հաղթանակն էր պատերազմի, հետադիմության, մարդկությանը դեպի վայրագ կամայականության և բարբարոսության հորձանուտ քաշող իմպերիալիստական մոլի ուժերի դեմ։ Այնքա՞ն վիթխարի է, իմաստնալից, համակողմանի այդ կարևորագույն իրադարձության դերն արդի աշխարհի անխտիր բոլոր ժողովուրդների համար, որ հազիվ թե հնարավոր է տվյալ դեպքում թեկուզ հարևանցիորեն շոշափել նրա միջազգային պատմական նշանակության հետ առնչվող բոլոր հարցերը։ Չէ որ մեր ժողովրդի պատմական հաղթանակը, որ ձեռք բերվեց միլիոնավոր զոհերի և չտեսնված ծանր, անփոխարինելի կորուստների գնով, պայմանավորված էր ինչպես հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական, այնպես էլ ռազմական, դիվանագիտական, տակտիկական, ստրատեգիական և համանման մի շարք այլ գործոններով, որոնցից յուրաքանչյուրի միջազգային-պատմական առումն անանց նշանակություն ունի հենց այսօրվա աշխարհի բարդ իրադրությունը, այնտեղ գործող ուժերը ճիշտ գնահատելու համար։ Սովետական ժողովրդի տարած հաղթանակը չի կորցնի իր հրատապությունը ապագայում ևս։ Ուստի մենք կանգ կառնենք լոկ առանձին հարցերի վրա, որոնք, անկասկած, ընդհանուր առմամբ խիստ կարևոր են բացահայտելու համար 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած փայլուն հաղթանակի միջազգային նշանակությունը. դրանք են՝ սոցիալիզմի հայրենիք Սովետական Միության հզորության ամրապնդումը, ՍՍՀՄ գլխավորությամբ սոցիալիստական երկրների միջազգա-

յին համագործակցության ստեղծումը, իմպերիալիզմի գաղութային համակարգի փլուզումը, կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր փուլի բռնկումը՝ երկրորդ համաշխարհային պատերազմի որոշ դասերով հանդերձ։

Գրեթե չորս տարի ռազմի դաշտերում ծավալված անօրինակ ահեղ մարտերում փորձության էին ենթարկվում սովետական երկիրը, նրա պետական ու հասարակական կարգը։ «Այդ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակը հաստատեց, որ աշխարհում չկան այնպիսի ուժեր, որոնք կարողանային կանգնեցնել սոցիալիստական հասարակարգի առաջընթաց զարգացումը»[1],— ասված է ՍՄԿԿ ծրագրում։ Կապիտալիստականի նկատմամբ սոցիալիստական հասարակարգի վիթխարի առավելությունները սովետական ժողովրդին հնարավորություն տվեցին արյունահեղ գոտեմարտում ի վերջո ոչ միայն ծնկի բերել նախապես ռազմաստրատեգիական անվիճելի առավելությամբ օժտված ահեղ հակառակորդին, այլև պատերազմից դուրս գալ՝ դառնալով ավելի հզոր, ավելի ամուր, ավելի կենսունակ։ Պատերազմի հաղթական ավարտը միաժամանակ հնարավորություն տվեց խաղաղ բանակցությունների միջոցով զգալի չափով ամրապնդել ՍՍՀՄ պետական սահմանները։

Սովետական Միության հաղթանակի շնորհիվ ամբողջ աշխարհում ստեղծվեց միանգամայն նոր իրադրություն, որը բարենպաստ էր ինչպես պատերազմից խիստ տուժած երկրի տնտեսության վերականգնման, այնպես էլ ընդհանրապես միջազգային ասպարեզում Սովետական Միության հեղինակության հետագա բարձրացման, դիրքերի ամրապնդման առումով։ Իհարկե, այդ իրադրությունն ի հայտ չեկավ ինքնիրեն, հանկարծակի, միանգամից, այլ արդյունք էր այն հերոսական ջանքերի, որ կոմունիստական կուսակցության առաջնորդությամբ գործադրում էր եղբայրական մի ընտանիքում միավորված բազմազգ սովետական ժողովուրդը։ ՍՍՀՄ-ը կարողացավ արագորեն վերականգնել իր ժողովրդական տնտեսությունը, ապա և ապահովել նրա սրընթաց զարգացումը։ Հանրահայտ է, թե պատերազմից անմիջապես հետո ԱՄՆ-ի գլխավորությամբ ինչպիսի դավերի էին դիմում հետադեմ իմպերիալիստական շրջանները, որպեսզի կասեցնեն աշխարհի «ձախացումը»՝ ամենից առաջ Սովետական Միության թուլացման, նրան իր գրաված դիրքերից ետ քշելու միջոցով։ Դրա համար նրանք յուրօրինակ «կովան» դարձրին ատոմային ռումբը, որի «մենիշխանությունը» այդ ժամանակ պատկանում էր ԱՄՆ-ին։ Իմպերիալիստական հետադիմությունը իր քաղաքականության մեջ ելնում էր այն բանից, որ առնվազն 20—25 տարի է պետք, որպեսզի Սովետական Միությունը ունենա իր ատոմային զենքը։ Սակայն 1949 թ. աշխարհը համոզվեց, որ իմպերիալիստները սխալվել են իրենց հաշիվներում, չանալով իրականության տեղ անցկացնել իրենց ցանկությունը։ Դեռ ավելին. ՍՍՀՄ-ը ստեղծեց նաև իր սեփական ջերմամիջուկային զենքը, 1957 թ. տիեզերք արձակվեց Երկրի առաջին արհեստական արբանյակը, 1961 թ. տիեզերք թռավ Յու. Գագարինը՝ աշխարհի առաջին տիեզերագնացը։

1950—1960-ական թվականների սահմանագլխին ավարտելով սոցիալիզմի վերջնական ու լիովին կառուցումը, Սովետական Միությունը ձեռնամուխ եղավ զարգացած սոցիալիզմի խնդիրների իրագործմանը։ ՍՍՀՄ պատմության վերջին քառորդ դարը նշանավորվեց տնտեսության, գիտության ու մշակույթի բոլոր մարզերում նորանոր նվաճումներով։ Դրանց հիման վրա ավելի ամրապնդվեց երկրի պաշտպանական հզորությունը, բարձրացավ ժողովրդական զանգվածների կենսամակարդակը, իրական պայմաններ ստեղծվեցին եղբայրական ընտանիքում միավորված սովետական բոլոր ազգերի ու ազգությունների հետագա հզոր առաջընթացի համար։

Սովետական Միությունը XX դ. վերջին տասնամյակն է թևակոխում որպես ժամանակակից առաջավոր գիտության ու մշակույթի հզոր երկիր, մեծ տերություն, որն իր պետական ազգային քաղաքականության, իր սոցիալ-

---

[1] «Սովետական Միության կոմունիստական կուսակցության ծրագիրը», Երևան, 1974, էջ 24։

տնտեսական զարգացման հիմքում դրել և իրականացնում է իսկական գիտական սկզբունքներ, որոնք լիովին համապատասխանում են և սովետական ժողովուրդների, և ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկության կենսական շահերին։

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած հաղթանակը անգնահատելի նշանակություն ունեցավ Սովետական Միության՝ ամբողջ աշխարհում խաղաղության և սոցիալական առաջընթացի գլխավոր ուժի, ամրապնդման համար։ Միաժամանակ, դա մեծապես նպաստեց իմպերիալիզմի տիրապետությունից ազատագրված և զարգացման սոցիալիստական ուղին բռնած երկրների ինքնուրույնության ու անկախության ապահովմանը, այնտեղ հասարակության սոցիալիստական վերափոխությանը։

ՍՍՀՄ-ի դեմ պատերազմը սանձազերծեց գերմանական ֆաշիզմը՝ առավել հետադեմ և ագրեսիվ իմպերիալիզմի դիկտատուրան, որը նպատակ էր դրել վերացնել աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը։ Դրան հասնելու համար նա ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում. պատերազմի առաջին շրջանում, օգտվելով ռազմական ուժերի և մարտական փորձի ասպարեզներում ունեցած առավելությունից, ֆաշիստական զորքերը մեր երկրում նվաճեցին վիթխարի տարածքներ, հրի ու սրի մատնեցին հազարավոր բնակավայրեր և դրանց բնակիչներին, հասան մինչև Լենինգրադի ու Մոսկվայի մատույցները, Վոլգայի ափերը, զավթեցին Կուբանը, մոտեցան Անդրկովկասին։ Ֆաշիստական բարբարոսները ամեն ինչ արեցին, որպեսզի ստրկացնեն օկուպացրած շրջաններում մնացած սովետական մարդկանց, սպանեն սոցիալիզմի նկատմամբ նրանց հավատը, վերջ տան Հոկտեմբերի նվաճումներին և բովանդակ աշխարհին «ապացուցեն», որ 1917 թ. տեղի ունեցած հեղափոխության հետևանքով ստեղծված «ռուսական կոմունիզմը», նրա գաղափարախոսությունը՝ մարքսիզմ-լենինիզմը, իբր ի սկզբանե դատապարտված են եղել կործանման և ապագան պատկանում է իրենց՝ ֆաշիստական հրոսակներին։ Նացիստական Գերմանիայի ամերիկյան և եվրոպական հովանավորները ցընծության մեջ էին. չէ որ մեջտեղից դուրս էր գալիս մարդկության համայն պատմության մեջ առանց շահագործողների, առանց իմպերիալիստների աշխատավորների իսկական պետության առաջին ու միակ օրինակը և աննախադեպ հնարավորություններ էին բացվում, որպեսզի Ասիայում ու Աֆրիկայում, Եվրոպայում և Ամերիկայում, աշխարհի բոլոր մասերում իրենք ավելի ամրապնդեն կապիտալիստական ստրկության շղթաները։ Նրանք համոզված էին, որ այն, ինչին իրենք չկարողացան հասնել ո՛չ 1918—1920 թթ. քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի ժամանակ, ո՛չ էլ սովետական պետության դեմ իրենց կողմից ամբողջ նախապատերազմյան շրջանում նյութած դավերով, այժմ ձեռք են բերում հեշտությամբ, գրեթե առանց ճիգերի, առանց կորուստների՝ հիտլերյան զավթիչների միջոցով։ Սակայն պատրանքներով տարված՝ իմպերիալիստական գուշակները այս անգամ ևս շարաշար սխալվեցին. կյանքն ապացուցեց, որ անհնարին է կանգնեցնել սոցիալական ու ազգային վերածնության ուղիով ժողովուրդների առաջընթացը։ Եվ դրանում վիթխարի էր այն դերը, որ խաղաց սովետական ժողովուրդը՝ խորտակելով ֆաշիզմը։

Պատերազմի վերջին շրջանում, շուրջ մեկ տարի, սովետական բանակը մարտեր էր մղում ՍՍՀՄ սահմաններից դուրս, սկզբում Եվրոպայում, ապա՝ Ասիայում։ Մինչ այդ նա մի ամբողջ շարք խոշոր ճակատամարտերում, որոնք մտահղացման, նախապատրաստման և կատարման առումով ցուցադրեցին սովետական ռազմիկի զինվորական հմտությունը և հրամանատարության բարձր վարպետությունն ու ռազմական արվեստի պատմության մեջ մտան որպես զորքը ռազմաճակատում ղեկավարելու դասական օրինակներ, պարտության էր մատնել սովետական երկիր ներխուժած ֆաշիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների զորքերին, մաքրել նրանցից մայրենի հողը։ Սովետական ժողովրդին, մարտերում հերոսացած նրա զինված ուժերին է պատկանում պատերազմի տարիներին ֆաշիզմի ջախջախման գործում վճռական դերը։ Հենց

սովետական բանակն էր, որ մինչև վերջ երբեք չթուլացնելով իր հարվածները, պատերազմը հասցրեց հաղթական ավարտի, հիտլերյան Գերմանիային ստիպեց կապիտուլյացիայի ենթարկվել։ Իր նպատակասլաց, շեշտակի գործողություններով նա ի չիք դարձրեց Գերմանիային փրկելու նպատակով Սովետական Միության թիկունքում նրանից գաղտնի անգլիական և ամերիկյան հետադիմական շրջանների կողմից կատարվող դավաճանական քայլերը։ Անկասկած էր, որ եթե չլինեին Սովետական Միության հետևողականությունն ու սկզբունքայնությունը, նրա դինված ուժերի վճռականությունը, չէր ստեղծվի այն ընդհանուր մթնոլորտը, որը բախտորոշ նշանակություն ունեցավ մի շարք երկրներում ժողովրդա-դեմոկրատական հեղափոխությունների հաղթանակի համար։

Եվրոպայում և Ասիայում սովետական բանակը իրականացրեց իր ազատագրական մեծ առաքելությունը՝ ապահովելով հակաֆաշիստական ու հակաիմպերիալիստական պայքարի ելքը հօգուտ աշխատավորական զանգվածների։ Կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը, սովետական զորքերը ամբողջությամբ կամ մասնակի չափով ազատագրել են 10 երկիր։ ՍՍՀՄ սահմաններից անդին, արևմուտքում և արևելքում աշխարհագրական ու բնակլիմայական տարբեր գոտիներում ընկած ահռելի տարածություններում ծավալված ճակատամարտերին մասնակցել է շուրջ 7 մլն սովետական զինվոր։ Ընդ որում, նրանցից ավելի քան մեկ միլիոնն ընկել է մարտում, ավելի քան երկու միլիոնը՝ շարքից դուրս եկել որպես վիրավոր կամ անհայտ կորած։

Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմությամբ զբաղվող բուրժուական շատ պատմաբաններ այժմ ջանում են «ապացուցել», որ սովետական զորքերը իբր թե բռնությամբ «բոլշևիզմ» փաթաթեցին ժողովրդական դեմոկրատիայի երկրներին՝ խաթարելով նրանց «բնական ընթացքը»։ Սա ավելի քան հերյուրանք է։ Սովետական բանակը ջախջախել է իմպերիալիստական Գերմանիային ու Ճապոնիային և ազատագրել նրանց բռնության տակ հեծող ժողովուրդներին։ Սակայն նա երբեք չի խառնվել և չի խառնվում այդ երկրների ներքին գործերին, չի որոշել նրանց կացութաձևը կամ հասարակարգը։ Իրականությունն այն է, որ այդ երկրներում հասունացել էին ներքին պայմանները՝ ժողովրդական իշխանություն հաստատելու համար։ Հենց դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ այդտեղ առաջադիմական ուժերին հաջողվեց կոմունիստական ու բանվորական կուսակցությունների ղեկավարությամբ իրականացնել աշխատավոր դասակարգերի, ամենից առաջ պրոլետարիատի նվիրական իղձերը։ Ինչ վերաբերում է այդ երկրներում սովետական զորքերի որոշ սահմանափակ կոնտինգենտների ներկայությանը, ապա պետք է ասել, որ դա թելադրվում է սոցիալիստական լագերի երկրների ընդհանուր պաշտպանական շահերով և ի չիք է դարձնում հակահեղափոխության ներմուծումը, որին միշտ դիմում են իմպերիալիստական հետադեմ ուժերը՝ նպատակ ունենալով իշխանության գլուխ վերադարձնել հեղափոխությամբ տապալված իրենց կամակատարներին։

Ֆաշիզմի դեմ սովետական ժողովրդի հաղթանակի շնորհիվ իմպերիալիզմի կապանքներից ազատագրված երկրներն ընտրեցին սոցիալիստական զարգացման ուղի և Սովետական Միության հետ միասին միավորվեցին սոցիալիստական երկրների համագործակցության մեջ։ Սոցիալիզմի համաշխարհային համագործակցությունը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գործի անմիջական շարունակությունն է, առաջադեմ մարդկության համար իսկապես միջազգային պատմական մի նվաճում, որի ակունքներում ընկած է երկրորդ համաշխարհային պատերազմում սովետական ժողովրդի ձեռք բերած հաղթանակը։

Պատմական մի կարճ ժամանակահատվածում աշխարհի քաղաքական քարտեզը երբեք այնպիսի արմատական փոփոխություններ չէր կրել, ինչպես երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած տարիներին։ Մինչև 1940-ական թվականների կեսերը մոլորակի բնակչության մի զգալի մասի մոտ

կարծես իրոք «օրինաչափ» բան էր համարվում, որ եվրոպական որոշ «քաղաքակիրթ» տերություններ իրենց «հովանավորության» տակ էին պահում հաճախ հազարավոր կիլոմետրերի հեռավորության վրա գտնվող այնպիսի տարածքներ, երկրներ, ժողովուրդներ, որոնք, որպես կանոն, մի քանի անգամ ավելի ընդարձակ էին, հարուստ, մարդաշատ, քան այսպես կոչված մետրոպոլիաները։ Իրենց իսկ հնարած «բնական իրավունքի» ուժով վերջիններս թալանում էին գաղութները, հալածում, ոչնչացնում բոլոր նրանց, ովքեր հանդես էին գալիս ընդդեմ օտարերկրյա բռնապետության։ Չնայած տարիներ շարունակ գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը բորբոքվում էր, բայց և այնպես գրեթե ամբողջ Աֆրիկան, Ասիայի և Լատինական Ամերիկայի մի զգալի մասը, օվկիանոսներում սփռված շատ կղզիներ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը համարվում էին Եվրոպայի մի շարք գաղութատեր երկրների «սեփականությունը» և ստիպված էին ենթարկվել նրանց մշակած «օրենսդրությանը»։ Եվ ահա, վրա հասան այն ժամանակները, երբ իմպերիալիստական գաղութարարներն այլևս ի զորու չեղան պահպանել բազմաթիվ ժողովուրդների նկատմամբ իրենց դաժան տիրապետությունը և ստիպված էին հաշտվել իրենց երբեմնի գաղութատիրական հզորությունը կորցնելու հետ։

Ճիշտ է, բացառությամբ Չինաստանի և Հյուսիսային Կորեայի, սովետական բանակը չկարողացավ և չէր էլ կարող անմիջական օգնություն ցույց տալ իմպերիալիզմի դեմ պայքարի դրոշ պարզած գաղութների ժողովուրդներին, բայց անկասկած է, որ առանց ֆաշիզմի ոչնչացման, առանց առաջադիմական ուժերի հաղթանակի հնարավոր չէր լինի կործանել իմպերիալիզմի գաղութային համակարգը։ Վճռական նշանակություն ունեցավ այն պարագան, որ պատերազմում Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի պարտությունը, մի կողմից, ժողովրդագեմոկրատական հեղափոխությունների հաղթանակը մի շարք երկրներում, մյուս կողմից, այնպես թուլացրին իմպերիալիզմը, որ նա այլևս անընդունակ գտնվեց բռնությամբ շարունակելու իր արյունոտ տիրապետությունը գաղութներում։ Միաժամանակ առկա էին նաև այլ գործոններ, որոնք ևս այս կամ այն կերպ առնչվում են պատերազմում առաջադիմական ուժերի հաղթանակի հետ։ Պատերազմի տարիներին մի շարք գաղութներում տեղի ունեցավ բանվոր դասակարգի քանակական և որակական արագ աճ։ Բանվոր դասակարգի հետ միասին գաղութատիրության դեմ հանդես էր գալիս նաև հայրենասիրաբար տրամադրված մտավորականությունը, ինչպես նաև ազգային բուրժուազիայի մի մասը, որը, ինչ խոսք, շարժման մեջ հետապնդում էր իր ուրույն դասակարգային շահերը։ Ազգային-ազատագրական շարժման հեղափոխական ուժերին ոգևորում և պայքարի վերջնական ելքի նկատմամբ հավատ էին ներշնչում սովետա-գերմանական ռազմաճակատում կարմիր բանակի հաղթանակները, որոնց լուրը կայծակի արագությամբ տարածվում էր աշխարհով մեկ, իմպերիալիստական հետադիմության դեմ ի զեն կոչելով միլիոնավոր ու միլիոնավոր մարդկանց։ Նկատելի դեր խաղաց նաև այն, որ անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան բանակներում այդ տարիներին ծառայում էին տարբեր գաղութներից հավաքագրված բազմաթիվ երիտասարդներ, որոնք ֆաշիզմի դեմ կռիվը իրավացիորեն սերտորեն կապում էին իրենց երկրների համար անկախություն նվաճելու հետ։ Վերադառնալով պատերազմից, նրանք Ինդոնեզիայում, Վիետնամում, Բիրմայում և մի շարք այլ երկրներում կազմակերպեցին ազգային զորամասեր, որոնք դարձան հակաիմպերիալիստական ապստամբությունների զինված ուժերի կորիզը։

Այսպիսով, պատերազմում Սովետական Միության հաղթանակը իրական պայմաններ ստեղծեց ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հաջողության համար։ Քայքայվեց բռնությամբ պահպանվող իմպերիալիզմի գաղութային համակարգը, պատմության բեմը անդարձ լքեցին բրիտանական, ֆրանսիական, հոլանդական, բելգիական, ապա նաև պորտուգալական գաղութային կայսրությունները. իմպերիալիզմն ընդմիշտ կորցրեց իր իշխանու-

թյունը հարյուր միլիոնավոր մարդկանց նկատմամբ, ստիպված եղավ Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում հրաժարվել իր քաղաքական, տնտեսական և ռազմաստրատեգիական դիրքերից։ Երկրագնդի բնակչության երկու երրորդը, որին իմպերիալիստները հեռու էին պահում պատմական զարգացման ընթացքին ակտիվորեն մասնակցելուց, բռնեց հասարակական առաջընթացի ուղի, հնարավորություն ստացավ իր ուժերը նվիրաբերելու աշխատավոր մարդկության բարօրությանը ծառայելու գործին։ Ինչպես ասված էր կոմունիստական և բանվորական կուսակցությունների ներկայացուցիչների 1960 թ. Մոսկվայի խորհրդակցության հայտարարության մեջ, ազգային-ազատագրական շարժման շնորհիվ գաղութային ստրկության համակարգի խորտակումը իր նշանակությամբ, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծումից հետո, հանդիսանում է արդի դարաշրջանի մյուս կարևորագույն իրադարձությունը։

Ժողովուրդների անկախության նվաճումը, նրանց կյանքի և գործի քաղաքական, սոցիալ-տնտեսական կացութաձևի արմատական վերակազմումը հեշտ գործ չէ։ Իմպերիալիստները, որոնք տակավին շատ վայրերում իրենց ձեռքին են պահում տնտեսական բարձունքները, աշխատում են ամեն կերպ խաթարել անկախության հասած, բայց երկրի վերափոխության ընթացքում լուրջ դժվարությունների հանդիպող նախկին գաղութների ժողովուրդների ազատագրական ուղին։ ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան զինված ագրեսիա կատարեցին Եգիպտոսի դեմ։ Նրանք զենքի դիմեցին նաև ընդդեմ Վիետնամի։ Այժմ իմպերիալիստական կառավարող շրջաններն Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայի երկրներում առատորեն սնում են հետադիմական ուժերին, սատար են կանգնում աֆղանական հակահեղափոխությանը, անկախություն ձեռք բերած ժողովուրդների դեմ պայքարում դիմում են դիվերսիաների, լրտեսության, տեռորի։ Սակայն զուր են իմպերիալիստների ջանքերը՝ արգելակելու զարգացող երկրների վերընթացը, քանի որ անվերադարձ անցել են այն ժամանակները, երբ իմպերիալիստները կարող էին տնօրինել ժողովուրդների, աշխարհի բախտը։

Իմպերիալիստական հետադիմությունը չկարողացավ հասնել իր հիմնական նպատակին՝ մեջտեղից հանելու Սովետական Միությանը և վերջ տալու ամբողջ աշխարհում կոմունիստական ու բանվորական շարժմանը, արյան մեջ խեղդելու ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, արգելակելու աշխարհի տարբեր մասերում կատարվող հեղափոխական վերափոխումները։ Բուն զարգացած կապիտալիստական երկրներում ֆաշիզմի ջախջախումից հետո արագացավ ժողովրդական զանգվածների հեղափոխական ընթացքը, մարքսիստական-լենինյան կուսակցությունների ղեկավարությամբ համաշխարհային կոմունիստական և բանվորական շարժումը բարձրացավ մի նոր աստիճանի։ Համաժողովրդական բնույթ ստացավ ընդդեմ պատերազմի, հանուն կայուն խաղաղության պայքարը, որի մեջ պրոլետարիատի և աշխատավորական մյուս դասակարգերի հետ միասին ընդգրկվեցին հասարակական տարբեր խավերի՝ կանանց, երիտասարդության, մտավորականության, նույնիսկ հոգևորականության ներկայացուցիչները։ Պատերազմի ընթացքում և նրան հաջորդող բուռն իրադարձությունների հետևանքով բռնկվեց կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի նոր փուլը, որից ազատվելու ելքը իմպերիալիստական պետությունները փնտրում են տնտեսության ու քաղաքականության ռազմականացման, ռազմական բլոկներ ստեղծելու, գիտության ու տեխնիկայի նվաճումները ազատասեր ժողովուրդների դեմ օգտագործելու մեջ։

1949 թ. ստեղծվեց Հյուսիսատլանտյան ագրեսիվ բլոկը (ՆԱՏՕ), որն ի սկզբանե Արևմուտքի հետադիմական ուժերի «սրբազան դաշինքն» է՝ ուղղված խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի ուժերի դեմ։ ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ըստ ամենայնի աջակցությամբ և հովանավորությամբ վերականգնվեցին ԳՖՀ-ի միլիտարիստական ուժերը, որոնք մտան ՆԱՏՕ-ի կազմի մեջ։ Գերմանական միլիտարիզմի հանդես գալը ուժեղացրեց սոցիալիզմի եղ-

բայրական երկրների հեղափոխական նվաճումներին սպառնացող իմպերիալիստական վտանգը։ Ի պատասխան իմպերիալիստների ագրեսիվ նկրտումների, երեսուն տարի առաջ՝ 1955 թ. մայիսի 14-ին, կնքվեց Վարշավայի պայմանագիրը, որը Եվրոպայի մի շարք սոցիալիստական պետությունների կամավոր ռազմաքաղաքական պաշտպանական դաշինքը լինելով՝ դարձել է ամբողջ աշխարհում խաղաղության պահպանման և անվտանգության կայունացման վճռական գործոնը։

Խաղաղության ու դեմոկրատիայի կողմնակիցները և պատերազմի ու բռնության ուժերը տարբեր դիրքերից ու նպատակներով են մոտենում երկրորդ համաշխարհային պատերազմի, նրա արդյունքների և միջազգային պատմական դասերի գնահատմանը։ Անցած չորս տասնամյակում Արևմուտքում քիչ աշխատություններ չեն լույս տեսել, որոնց հեղինակները կեղծում են պատմությունը, փորձում են նսեմացնել Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի անմահ սխրագործության համաշխարհային-պատմական նշանակությունը։ Վերջին տասնամյակում էլ ոչ միայն պատերազմի պատմությանը նվիրված առանձին աշխատություններում, կամ լրագրային հոդվածներում, այլև կառավարող շրջանների կողմից կասկածի տակ են դրվում 1945 թ. Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներում հակահիտլերյան դաշինքի պետությունների ղեկավարների ընդունած որոշումների իրավասությունը, որոշումներ, որոնք ընկած են ոչ միայն հետպատերազմյան Եվրոպայի, այլև, կարելի է ասել, արդի աշխարհի միջազգային հարաբերությունների հիմքում։ Սակայն բանը չի վերջանում սոսկ ոչ հեռավոր անցյալի պատմությունը թղթի վրա սևացնելով, միտումնավոր կերպով նենգափոխելով։ ԱՄՆ-ը ՆԱՏՕ-ի միջոցով Եվրոպայում, սոցիալիստական համագործակցության դաշինքի երկրների սահմանների մերձակայքում, տեղադրում է միջուկային զենքով լիցքավորված միջին հեռավորության հրթիռներ։ Միաժամանակ, Արևմտյան Գերմանիայում ավելի է սաստկանում ռևանշիստական աղմուկը, նույնիսկ կառավարության ղեկավարները հանդես են գալիս պատերազմի հաղթական ավարտից հետո ընդունված որոշումները հօգուտ գերմանական միլիտարիզմի վերանայելու ցնորամիտ պահանջով։ Միաժամանակ Արևելքում միջազգային մթնոլորտը ավելի շիկացնելու ջատագովները ավելի ու ավելի ակտիվորեն են Ճապոնիայի տնտեսական ու ռազմական պոտենցիալը ներգրավում պատերազմական պատրաստությունների մեջ։ Ցսահմանափակվելով մեր մոլորակով, ՆԱՏՕ-ի, հատկապես ԱՄՆ-ի կառավարող շրջանների կողմից կոնկրետ միջոցառումներ են ձեռնարկվում «աստղային պատերազմի»՝ ապագա պատերազմում տիեզերքը ռազմական նպատակով օգտագործելու ուղղությամբ։ Այս ամենով հանդերձ, իմպերիալիստական պրոպագանդան ամենուր աղմկում է՝ փորձելով մարդկանց «համոզել», որ իբր Վարշավայի պայմանագրի երկրների հետ միասին Սովետական Միությունն ունի ռազմական գերակշռություն և որ իրենք «ստիպված» են դիմում «պաշտպանական միջոցներին»։ Այժմ ավելի քան երբեք մարդկությունը կանգնած է ահեղ վտանգի առաջ։ Մեր մոլորակի զինանոցներում այսօր այնքան զենք է կուտակված, որ այն ունակ է մի քանի անգամ ոչնչացնել ամբողջ մարդկային քաղաքակրթությունը և բուն կյանքը երկրագնդի վրա։

Արդեն չորս տասնամյակ է, ինչ Եվրոպան զերծ է պատերազմից, իսկ աշխարհի այս կամ այն շրջանում բռնկված կոնֆլիկտներն էլ ամփոփվել են տեղային շրջանով։ Եվ դա շնորհիվ ամենից առաջ սոցիալիզմի լագերի հզորության, նրա խաղաղասեր քաղաքականության։ Որպես անհաղթահարելի պատնեշ՝ նա կանգնած է հակապատերազմական ուժերի առաջին շարքերում։ Սոցիալիստական համագործակցության երկրները միահամուռ գտնում են, որ մեր ժամանակի գլխավոր հարցը դա սպառազինությունների մրցավազքի դադարեցումն է և զինաթափումը, առաջին հերթին՝ միջուկային զենքից հրաժարումը։ Ամբողջ առաջադեմ մարդկությունը ակտիվորեն պաշտպանում է նրանց այն առաջարկությունը, որ քանի ուշ չէ, հարկավոր է արդի միջազգային հարաբե-

րությունններում եղած վիճելի հարցերն ու տարաձայնությունները լուծել բանակցությունների միջոցով՝ պետությունների փոխադարձ շահավետության, իրավահավասարության և համագործակցության հիմունքներով։ Ընդ որում, հարկ կլինի հիմնովին վերանայել այդ հարաբերությունների բնույթը, էությունը, քանի որ դրանց դրսևորման այսպես կոչված «դասական ձևերն» ուղղված են իմպերիալիստական պետությունների կողմից միակողմանի առավելություն ձեռք բերելու նպատակին և միջուկային զենքի առկայության պայմաններում չեն կարող համապատասխանել ո՛չ առանձին ժողովրդի կամ պետության, ո՛չ էլ համայն մարդկության շահերին։ Լարվածությունը թուլացնելու, ապա և այսօրվա հրատապ միջազգային հարցերը լուծելու համար սոցիալիստական երկրները առաջարկում են ստեղծել կոլեկտիվ անվտանգության համաեվրոպական համակարգ, վերացնել օտարերկրյա ռազմական հենակետերը՝ բոլոր զորքերը ուրիշի տարածքից դուրս բերելու պայմանով, Եվրոպայում ստեղծել միջուկային զենքից զերծ գոտիներ և այլն։

Այսպիսով այն օրերին, երբ մարդկությունը նշում է ֆաշիստական Գերմանիայի դեմ Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի, աշխարհի բոլոր առաջադիմական ուժերի տարած հաղթանակի 40-ամյակը, նորից ամբողջ սրությամբ ծառացել է պատերազմից աշխարհը վնասազերծելու, այդ նպատակով պետությունների միջև փոխադարձ վստահության վրա հենված, համագործակցության հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության հարցը։ Գլուխ խոնարհելով բոլոր նրանց հիշատակի առջև, ովքեր ընկան ֆաշիզմի դեմ մղված պայքարում, բոլոր ազնիվ մարդիկ իրենց առաջնահերթ խնդիրն են համարում՝ անել ամեն ինչ կանխելու նոր համաշխարհային սպանդը, այս անգամ արդեն միջուկային պատերազմը։ Աշխարհի բախտի համար կենսական նշանակություն ունեցող այդ պայքարի առաջամարտիկը, ինչպես միշտ, սովետական ժողովուրդն է՝ խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի հուսալի պատվարը։